

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**ՔԱՂԱՔԱՅԻ ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԻԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐԷԻ 73-ՐԴ
ՆՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 6-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 դեկտեմբերի 2013թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի,
Ա. Խաչատրյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ քաղաքացի Է. Խաչիկյանի,

գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ ՆՆ Ազգային ժողովի պաշ-
տոնական ներկայացուցիչ՝ ՆՆ Ազգային ժողովի աշխատակազմի հեղափոխություն-
ների և վերլուծությունների կենտրոնի փորձագետ Ն. Սարգսյանի,

համաձայն ՆՆ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ
հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի
25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Էդուարդ Խա-
չիկյանի դիմումի հիման վրա՝ ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ
հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերի՝ Նայասարանի Նանրապետության Սահմա-
նադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Է. Խաչիկյանի՝ 2013 թվականի հունիսի 14-ի (լրացված՝ հունիսի 25-ին) ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող էւ պարասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաեւ հետագորելով ՆՏ վարչական դատավարության օրենսգիրքը էւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. ՆՏ վարչական դատավարության օրենսգիրքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին էւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Նայցադիմումին կցվող փաստաթղթերը» վերառությամբ 73-րդ հոդվածի 1-ին մասի՝ սույն գործով վիճարկվող 6-րդ էւ 7-րդ կետերը սահմանում են.

«1. Նայցադիմումին կցվում են՝

...

6) հայցադիմումը էւ կից փաստաթղթերի պարճենները (էթե դրանք հնարավոր է պարճենահանել) պարասխանողին էւ գործին մասնակցող այլ անճանց, սույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապարասխան, ստանալը հավաստող փաստաթղթերը.

7) սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դէպքում հայցադիմումը պետական ֆինանսների կառավարման մարմնին սույն օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկելը հավաստող փաստաթղթերը»:

2. Գործի համառոր դատավարական նախապարմությունը հանգում է հետելյալին.

Էդուարդ Խաչիկյանը հայցադիմում է ներկայացրել ՆՏ վարչական դատարան ընդդէմ ՆՏ ԱՆ «Կոշ» ՔԿՆ-ի պետ Ա. Ստեփանյանի՝ «ՆՏ ԱՆ «Կոշ» ՔԿՆ-ի պետ Ա. Ստեփանյանի 03.10.2012թ. Դատապարտյալին առավել ցածր մեկուսացվածության ուղղիչ հիմնարկ տեղափոխելու միջնորդություն ներկայացնելու մասին դիմումը մերժելու որոշումն առջինչ ճանաչելու էւ առջնչության հետելանքները կիրառելու, նույն որոշումով պարասխանողի անգործությունը վերացնելու, պարասխանողին

19.09.2012թ. դիմումին պարզաբանում տալուն պարտավորեցնելու» պահանջների մասին: ՆՏ վարչական դատարանը 09.11.2012թ. կայացրել է «Նայցադիմումը վերադարձնելու մասին» որոշում, որում, ի թիվս այլ հանգամանքների, նշել է, որ. «...Տվյալ դեպքում հայցվորի ներկայացրած հայցադիմումին չի կցվել հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները պարասխանողին եւ ֆինանսների կառավարման մարմնին ուղարկելու եւ վերջիններիս կողմից դրանց սրանալը հավաստող փաստեր: Նման հանգամանքը դատարանի կողմից դիմում է Նայաստանի Նանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի խախտում»: 12.12.2012թ. հայցվորը կրկին հայցադիմում է ներկայացրել ՆՏ վարչական դատարան, որի վերաբերյալ վերջինս 19.12.2012թ. կայացրել է «Նայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում՝ պարճառաբանելով, որ «...12.12.2012թ. կրկին ներկայացված հայցադիմումին կից չի ներկայացվել հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները պարասխանողի եւ ֆինանսների կառավարման մարմնի կողմից սրանալը հավաստող ապացույցները, այսինքն, հայցվորի կողմից չի վերացվել հայցադիմումի այնպիսի թերությունները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար»:

Վերոհիշյալ որոշման դեմ հայցվորի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՆՏ վարչական վերաքննիչ դատարանի 22.02.2013թ. որոշմամբ մերժվել է՝ ՆՏ վարչական դատարանի 19.12.2012թ. թիվ ՎԴ 7000/05/12 վարչական գործով կայացված որոշումը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին, թողնելով օրինական ուժի մեջ: Նիշյալ որոշման դեմ Էդուարդ Խաչիկյանի բերած վճռաբեկ բողոքի վերաբերյալ ՆՏ վճռաբեկ դատարանը 20.03.2013թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում:

3. Վիճարկելով ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերի դրույթների սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ հիշյալ դրույթները հակասում են ՆՏ Սահմանադրության 18-րդ հոդվածին, սահմանափակում են անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Դիմողի կարծիքով, քանի որ վարչական դատավարության օրենսգրքով ամրագրված է նախնական դատական նիստի ինստիտուտը, հետեւաբար, դատաքննության այդ փուլում կարելի է լուծել հայցադիմումը պարասխանողին կամ երրորդ անձին ծանուցելու հետ կապված հարցերը, ուստի եւ անընդունելի են ՆՏ վարչական

դափարվարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերի պահանջները, որոնք անձին գրկում են դափական պաշտպանության եւ հրապարակային քննության իրավունքից:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՏՏ վարչական դափարվարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերը համապատասխանում են ՏՏ Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ սույն գործով վիճարկվող դրույթների իրավակարգավորումների նպատակն է ապահովել դափական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը, դափական նիստում գործի ճիշտ եւ արագ քննությունը եւ լուծումը: Տայցադիմումի եւ կից փաստաթղթերի պարզեցումները պատասխանողին ուղարկելու պարտականությունը դրվել է հայցվորի վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերը, գտնվելով որոշակի իրավահարաբերությունների, որոշակի վեճի մեջ, իրագեկված են միմյանց մասին: Տայցադիմումը պատասխանողին ուղարկելը վարչական դափարվարությունում կողմերի իրավահավասարության, հարկապես՝ պատասխանողի իրավունքների պաշտպանության երաշխիք է, քանզի պատասխանողն իր պաշտպանությունը կառուցում է հայցվորի ներկայացրած փաստարկների հիման վրա, իսկ հայցադիմումի վերաբերյալ պատասխան չներկայացնելը վերջինիս համար առաջացնում է իրավական հետեւանքներ:

5. ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դափարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դափարանի վերջնական ակտը, սպառվել են դափական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»: Սահմանադրական հիշյալ նորմն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դափարանի մասին» ՏՏ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին եւ դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության փորձաքննությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները:

Տամաձայն սահմանադրական դափարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ ՏՏ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...» բառակապակցությունում «կիրառում»

հասկացությունը չի վերաբերում դափական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ (ՄԴՈ-747): Բացի դրանից, համաձայն ՆՏ սահմանադրական դափարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՄԴԱՈ-21 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դափարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»:

ՆՏ սահմանադրական դափարանն արձանագրում է նաև, որ քննության առարկա գործով ՆՏ վարչական վերաքննիչ դափարանը, մատնանշելով, որ ՆՏ վարչական դափավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը հայցվորի համար պարտականություն է նախատեսել կցել ոչ թե սպանալը, այլ ուղարկելը հավասարող փաստաթուղթ, անհիմն է համարել ՆՏ վարչական դափարանի եզրահանգումները՝ «...ՆՏ ֆինանսների նախարարության կողմից հայցադիմումի **ստանալը** հավասարող փաստաթուղթ կցած չլինելու հիմքով, նախ հայցադիմումը վերադարձնելու, ապա՝ դրա ընդունումը մերժելու մասին...»: ՆՏ վճռաբեկ դափարանը եւս՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ, ըստ էության, վերահաստատել է ՆՏ վարչական վերաքննիչ դափարանի արտահայտված հիշյալ եզրահանգումը: Ներկայացրած, դիմողի նկատմամբ ՆՏ վարչական դափավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթը չի կիրառվել, այն դիմողի համար իրավական հետևանք չի առաջացրել:

Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետը՝ սահմանադրական դափարանը գտնում է, որ սույն գործով ՆՏ վարչական դափավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթի վիճարկումը չի բխում սահմանադրական կոնկրետ վերահսկողության էությունից, սույն գործով դիմողը սահմանադրական դափարան դիմելու իրավասու սուբյեկտ չէ, ուստի քննության առարկա գործի վարույթը, ՆՏ վարչական դափավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի մասով, ենթակա է կարճման:

6. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դափարանն անհրաժեշտ է համարում բացահայտել ՆՏ վարչական

դարավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ամրագրված «սրանալը հավասարող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի նշանակությունը՝ ՆՏ Սահմանադրության, մասնավորապես, 18-րդ հոդվածով սահմանված՝ դարական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ դարարանի մարչելիության իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու համարեքսպում:

Սահմանադրական դարարանը, սույն գործով վիճարկվող դրույթը վերլուծելով ՆՏ վարչական դարավարության օրենսգրքի (այսուհետ նաեւ՝ օրենսգիրք) այլ դրույթների հետ համակարգային ամբողջականության շրջանակներում, արձանագրում է, որ օրենսդիրն առանձին հոդվածներով սահմանել է հայցադիմումին ներկայացվող պահանջները (72-րդ հոդված) եւ հայցադիմումին կցվող փաստաթղթերի կոնկրետ շրջանակը (73-րդ հոդված), վերջինիս թվում սահմանելով նաեւ հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պարճենները (եթե դրանք հնարավոր է պարճենահանել) պարասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց, օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապարասխան, սրանալը հավասարող փաստաթղթերը:

Օրենսդիրը հայցադիմումին ներկայացվող վերոհիշյալ պահանջների պահպանման հանգամանքով է պայմանավորում հայցադիմումը վարույթ ընդունելը: Դարարանը պարավոր է հայցադիմումն սրանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, վարույթ ընդունել օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր (77-րդ հոդված):

Նայցադիմումը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու կոնկրետ հիմքերը եւ կարգը սահմանված են օրենսգրքի համապարասխանաբար 78-րդ եւ 79-րդ հոդվածներով:

Անդրադառնալով հայցադիմումը վերադարձնելու իրավական հիմքերին՝ սահմանադրական դարարանն արձանագրում է, որ օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասում որպես հիմք ամրագրված է օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված հայցադիմումին առաջադրվող պահանջները չպահպանելը, իսկ օրենսգրքի 73-րդ հոդվածի մասով ամրագրված է միայն հիշյալ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պահանջը չպահպանելը: Սահմանադրական դարարանը վերահասարարում է 2010 թվականի նոյեմբերի 30-ի ՄԴՈ-927 որոշմամբ արտահայարած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ օրենսգրքի 73-րդ հոդվածի **պահանջները** չպահպանելու իրավական հետեւանքը վարչական դարարանի կողմից հայցադիմումը վերադարձնելն է, եւ գրնում է, որ հետագա իրավական կանոնակարգումների շրջա-

նակներում հիշյալ դիրքորոշումն անհրաժեշտ է ամրագրել օրենսգրքում, մասնավորապես՝ հայցադիմումը վերադարձնելու իրավական հիմք նախատեսելով օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պարտադիր կարարման ենթակա պահանջները չպահպանելու բոլոր դեպքերը: Նիշյալ կանոնակարգման անհրաժեշտությունը բխում է նաև իրավական որոշակիության եւ իրավական կանխատեսելիության սկզբունքների պահանջներից, նպատակաուղղված է սահմանելու դատարանի լիազորությունների կոնկրետ շրջանակը:

7. ՆՏ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է արդարադատության մարզելիության եւ արդյունավետության խնդիրներին՝ առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19-րդ եւ այլ հոդվածներով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով՝ վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան:

Սույն գործի շրջանակներում եւս սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել դատարանի մարզելիության սահմանափակումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մարզելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում եւ եթե կիրառված միջոցների եւ հետապնդվող նպատակի միջեւ չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000):

Քննության առարկա գործի շրջանակներում եւս, կարեւորելով անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորող նորմատիվ իրավական անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն ու զարգացումը, գնահատելով վիճարկվող իրավակարգավորման ազդեցությունը դատարանի մարզելիության եւ արդար դատաքննության իրավունքների, ինչպես նաև դրանց արդյունավետ իրականացման

երաշխիքների վրա, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելով ՏՏ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ: Տիշյալ համապեքստում, սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցադիմումի ձեւի եւ բովանդակության պահանջներ սահմանելու իրավակարգավորման նպատակը ոչ թե հայցվորին ավելորդ պարտականություններով ծանրաբեռնելն է, այլ հայցադիմումի ձեւի եւ բովանդակության հստակությունն ապահովելը, դատավարության արդյունավետ եւ օբյեկտիվ կազմակերպման անհրաժեշտ երաշխիքներ սահմանելը, նաեւ հայցադիմումը վարույթ ընդունելու ժամանակ վերացման ենթակա հետագա հնարավոր խոչընդոտները կանխարգելելը: Տայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները պարասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց, օրենսգրքով սահմանված կարգով, **ուղարկելն** իրավաչափ է, քանի որ նպատակաուղղված է վարչական դատավարության մյուս կողմի դատավարական իրավունքների եւ պարտականությունների պարզաճ կատարման երաշխավորմանը: Այն իրականացվում է օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգին համապատասխան, որի 1-ին մասի համաձայն՝ «Ծանուցագրի հանձնումն իրականացվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» Տայստարանի Տանրապետության օրենքով սահմանված կարգով: Դատավարության մասնակիցները կարող են համաձայնվել ծանուցման այլ եղանակի մասին, մասնավորապես ֆաքսով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով, հեռագրով»: Իսկ «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» ՏՏ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի համաձայն՝ հատուկ առաքում է համարվում փոստով կամ առձեռն հանձնմամբ հատուկ առաքումը: Տատուկ առաքումը փոստով տեղի է ունենում միայն փոստային կապի ազգային օպերատորի միջոցով: Տիշյալ օրենքներով կանոնակարգումները վկայում են, որ սահմանված են անհրաժեշտ ընթացակարգեր, որոնք ապահովում են պարզաճ ծանուցման իրականացումը: Բացի դրանից, ՏՏ վարչական դատավարության օրենսգիրքը, գործի դատաքննության նախապարաստման շրջանակներում, ամրագրում է դատավարական փաստաթղթերին ծանոթանալու բավարար այլ երաշխիքներ, որոնց նպատակն է ապահովել ՏՏ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված անձի սահմանադրական իրավունքը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ, ի տարբերություն վերոգրյալի, վիճարկվող դրույթով «ստանալը հավասարող փաստաթղթեր» ներկայացնելու պա-

հանջ սահմանելն ավելորդ ծանրաբեռնում է հայցվորի դատավարական պարտականությունների շրջանակը, քանի որ հայցվորից, ըստ էության, պահանջվում է ապացույց առ այն, որ, մասնավորապես, փոստային կապի ազգային օպերատորը պատշաճ կարարել է օրենքով իր վրա դրված պարտականությունը: Ուստի, վիճարկվող դրույթը՝ «սրանալը հավասարող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի մասով իրավաչափ նպատակ չի հետապնդում, արդյունքում՝ դժվար հասանելի է դարձնում դատարանի մատչելիության իրավունքը, ստեղծում է անձի դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման վտանգ:

Վերոնշյալի մասին է վկայում նաև սույն գործով վիճարկվող դրույթի հետ կապված իրավակիրառական պրակտիկան, համաձայն որի՝ ՏՏ վարչական դատարանի կողմից 2012 թվականից մինչև 2013 թվականի նոյեմբեր ամիսը ՏՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը հայցվորների կողմից սահմանված կարգով չպահպանելու հիմքով հայցադիմումները վերադարձնելու 208 դեպքից միայն 103 դեպքում է այն կրկին ներկայացվել վարչական դատարան, որոնցից 94-ն ընդունվել է վարույթ, 9-ի ընդունումը մերժվել է: Այսինքն, կեսից ավելի՝ 105-ի դեպքում վիճարկվող դրույթի հիմքով անձինք չեն կարողացել իրացնել դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրենց իրավունքը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դատավարական փաստաթղթերի սրանալը հավասարող փաստաթղթեր ներկայացնելու ընթացակարգի շրջանակներում կողմերի դատավարական իրավունքները եւ պարտականությունները համաչափ բաշխված չեն: Մասնավորապես, ի փարբերություն վիճարկվող դրույթի, օրենսգրքի 83-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պատասխանողը ներկայացնում է նաև՝ հայցադիմումի պատասխանը եւ կից փաստաթղթերը հայցվորին եւ գործին մասնակցող այլ անձանց՝ փաստաթղթերի հատուկ առաքման կարգին համապատասխան **ուղարկելը** հավասարող ապացույցները: Այսինքն՝ օրենսդիրը պատասխանողի համար չի սահմանել հայցադիմումի պատասխանը եւ կից փաստաթղթերը **սրանալը** հավասարող փաստաթուղթ ներկայացնելու պարտականություն:

8. Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի շրջանակներում դատարանի մատչելիության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքների եւ վարչական դատավարությունում կողմերի

հավասար հնարավորությունների իրացումը կարող է երաշխավորված լինել հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պարասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց, ՆՏ վարչական դատարության օրենսգրքով սահմանված **պարշաճ կարգով ուղարկելու** պահանջի կատարմամբ, ինչպես նաեւ գործի քննության ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու օրենսդրական համարժեք երաշխիքների իրացմամբ: Այդ պահանջի եւ երաշխիքների հստակ եւ համակարգված կանոնակարգումը, ելնելով ՆՏ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությունից, օրենսդիր մարմնի պարտականությունն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 32, 60, 63, 64, 68 եւ 69-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ «սրանալը հավասարող փաստաթղթեր» ներկայացնելու պահանջի մասով ճանաչել ՆՏ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին հակասող եւ անվավեր:

2. «Քաղաքացի Էդուարդ Խաչիկյանի դիմումի հիման վրա՝ ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ եւ 7-րդ կետերի՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը՝ ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի մասով կարճել:

3. Նաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ՆՏ Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կհանգեցնի այնպիսի հետեւանքների, որոնք կխաթարեն այդ պահին փոխյալ նորմի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, ինչպես նաեւ նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պարասխանողին եւ գործին մասնակցող այլ անձանց՝ ՆՏ վարչական դատարարության օրենսգրքով սահմանված **պարշաճ կարգով ուղարկելու** պահանջի եւ գործի քննու-

թյան ամբողջ ընթացքում կողմերի համար հավասար հնարավորություններ ապահովելու իրավական համարժեք երաշխիքների հստակ և համակարգված օրենսդրական կանոնակարգում, ՆՏ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2014 թվականի հուլիսի 1-ը:

4. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Վ. ՆՈՎՏԱՆՆԻՍՅԱՆ

10 դեկտեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1127